



# ԲԱԶՄԱՎԵՊ

ԺԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 20.

1856

ՀՈԿՏԵՄԲԵՐ 15.

Ա.Չ.Ա.ՑԻՆ ՀԱՆԴԵՍ

## ՌԱՓԱՅԵԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Տարեկան հարցաքննուրինն ու պարզեարաշիուրինը :

**Բ**ափայելեան վարժարանին փութաջան և ընտիր աշակերտաց տարեկան հարցաքննութիւնն ու պարգևաբաշխութիւնը անցեալ ամսոյն մէջ կատարուեցաւ : Այսպիսի ընտանեկան հանդէս մը սովորականէն աւելի մտադրութեան արժանի կը սեպուի այն ազգայնոց առջե՝ որոնց աչքը իրաւամբ բարեկարգ վարժարանաց վրայ դարձած է, անոնց խորհրդաւոր որմոցը մէջ ընկած և խեղջազգի մը՝ երջանիկ ապագան փընտուելու : Այնպիսիք լաւ ըմբռնած են թէ ազգի մը, և մանաւանդ մեր ազգին, տգիտութենէ առած վէլքերուն միակ սպեզանի՝ բուն և հաստատուն զիտութեանց ծաւալին է . և առանց անոր՝ կարծեցեալ յառաջադիմութիւնը, քայլելու դեռակիրթ տղոց առաջին քայլափոխներուն կը նմանի, որոնք շատ

անգամ ստիպուած են իյնիլ ու ելլել, և անանկով սովորիլ ոտնփոխնին ընելու : Ուրախ ենք ըսելու թէ, ազգային այն վարժարանաց մէջ՝ որ այսպիսի գեղեցիկ սկիզբ մը հիմն դրած են իրենց դաստիարակութեանը, յետին չէ նաև Բափայելեան վարժարանը . և աւելի պարծանօք կրնանք ըսել այս խօսքս՝ քանի որ անկողմնասէր և ազգին բուն օգուածը ճանցող բարեսիրաց վկայութիւնքը մեր կարծեացը և ակնկալութեանց համեմատ կը տեսնենք :

Վարժարանին Տեսուչքը սովորականէն աւելի փառաւորութեամբ ուղեցին կատարել այս տարուան պարգևաբաշխութեան հանդէսը, ոչ միայն անոր համար որ աշակերտք սովորականէն աւելի ջանք ցուցըցեր էին, այլ մանաւանդ զի երիցագոյն դասու աշակերտելոց հա-

մար վերջին հանդէս մըն էր որ կը կա-  
տարուէր, անոնց սահմանուած ուսու-  
մնական ընթացքին աւարտը հասած  
ըլլալով։ Ա երջին անգամ մըն էր որ  
վարժարանիս Տէսուչքը՝ անոնց բարե-  
կրօն ընթացիցը և ուսումնասիրութեան  
դոյզն վարձքը մատուցանելով, կը պատ-  
րաստուէին խրկելու զանոնք իրենց հայ-  
րենեաց գիրկը, ուրախ և վստահ սըր-  
տով թէ այն ազնիւ խումբը՝ իրենց  
կրթութեամբը, դաստիարակութեամբ,  
գիտութեամբ և մանաւանդ աստուած-  
պաշտութեամբ՝ մէյմէկ պարծանք պի-  
տի ըլլան թէ այն վարժարանին ուր  
կրթուած են, և թէ այն դաստիարա-  
կաց՝ յորոց կրթութիւնը առեր են։ Այս  
իրենց ուրախութիւնը աւելի ընդհա-  
նուր ընելու համար, օրերով առաջ բազ-  
մաթիւ անձինք հրաւիրեցան՝ պարգեա-  
բաշխութեան հանդիսին ներկայ գրտ-  
նուելու, որոնց պարագլուխ բազմելու  
պատիւը ընծայեց վարժարանիս՝ Ա ե-  
նետկոյ քաղաքապետ Պիշինկէն կոմմը,  
ուրիշ զանազան իշխանաւորաց ընկե-  
րակցութեամբ։

Ա արժարանին ընդարձակ դահլշին  
մէջ՝ փոքրիկ արուեստահանդէս մը ձևա-  
ցեր էր հարիւրէն աւելի իւղաներկ և  
պարզ նկարներով, որոնք փութաջան  
աշակերտաց այս տարուանս մէջ՝ի գը-  
լուխ տարած երկասիրութիւնքն էին,  
և որոնց մէջ իրենց փոյթն և ճարտա-  
րութիւնը հաւասարապէս կ'երևնար :  
Ո՞ւ ասնաւոր խուցի մը մէջ ալ զրուած  
էին Պ . Խսայի Խսայեանին շրջատե-  
սիլ նկարները՝, որոնք իրենց կատա-  
րելութեամբը հանդիսաղրաց ոչ միայն  
զուարձութի, այլ նաև զարմանք պատ-  
ճառեցին :

Ղնցեալ սեպտեմբեր ամսոյն 15-ին ,  
առ Ղստուած մատուցուած չնորհակա-  
լութեան պատարագէն ետքը , յորում  
աշակերտեալք սուրբ Խորհրդոյն հա-  
ղորդեցան , բոլոր հանդիսականք վար-  
ժարանին դահլիճը ժողվուելով , աւո-  
տրիական ազգային երգոց գործիական

Երաժշտութեամբ քաղաքապետը ըն-  
դունուեցաւ, ու մէկէն սկսաւ հանդէսը:  
Հյորումնախ Տեսուչ վարդապետը ի-  
տալերէն Ատենախօսութիւն մը ըրաւ,  
կրօնից՝ դաստիարակութեան մէջ գրա-  
ւած տեղը և օգուտը ցուցընելով: Ի իւթ  
մը, որուն հարկաւորութիւնը կարծես  
թէ մեր ժամանակը կ'ուրանայ, և նոյն  
իսկ ժիստելուն ատեն կ'իմանայ անոր  
պէտքը: Ո՞ր և իցէ դաստիարակութիւն  
և կրթութիւն իրենց վախճանին չեն  
հասնիր, ինչուան որ կրօնից հիմնը  
վրայ հաստատուած ըրլան. առանց ա-  
նոր զմարդ կազմելու համար աշխատո-  
ղը, մանկութեան ապագային առջև  
վիչ մը կը փորէ, և բարոյական կենաց  
շէնքը՝ սուրբ աւետարանին բացատրու-  
թեանը համեմատ, աւազի վրայ կը կա-  
ռուցանէ, որպէս զի ահաւորագոյն կոր-  
ծանում մը պատրաստէ անոր, երբոր  
կրից հողմերը զօրանան, ապականեալ  
բնութեան հեղեղքը՝ խախուտ դա-  
տիարակութեան մը վրայ հիմնած շէն-  
քը տապալեն: Այս վտանգին դէմ  
առանելու համար է կրօնքը. միայն ձը-  
մարիտ կրօնքն է մարդուս անցաւոր և  
անանց կեանքը իրարու հետ շաղկապող  
ու ինչպէս մեծարգոյ Ատենախօսը Ա-  
ռաքելցն խօսքովը կը հաստատէր Այս  
ամենայն ինչ օգտակար է, և զաւետիս  
կենաց ունի, զարդիս և զհանդերձե-  
լցն ։

Ղտենախօսութենէն ետքը աշակեր.  
տաց յառաջադիմութեան վլիճակը կար-  
դացուելով, իւրաքանչյւր արժանեացը  
համեմատ մրցանակը տուաւ մեծապա-  
տիւ քաղաքապետը, իրեն բարեսէր  
փութովը խանգաղատելով այն նո-  
րափթիթ հասակին վրայ, որոնք այն-  
չափ ուրախութեամբ յանձն առեր են  
վեցամեայ օտարութիւն և անձուկ քա-  
շել իրենց սիրելեացը, ծնողաց և ազ-  
գականաց, որպէս զի ուսումնական և  
բարոյական դաստիարակութեամբ ազ-  
նուացընելով իրենց բաղդը, կարենան  
թէ հայրենեաց և թէ ընտանեաց ա-  
ւելի օգտակար ըլլալ:

Պարզեւաբաշխութենէն վերջը երի-

ցագոյն դասու աշակերտաց մէկը , իր բոլոր ընկերակցացը երախտագէտ սըրտին և զգածմանցը թարգման ըլլալով , հետագայ չնորհակալութեան խօսքերը զրուցեց գաղղիարէն՝ այն ընտանեկան հանդիսին իրեն ներկայութեամբը փառաւորութիւն տուող՝ Քաղաքապետին .

« Ահծապատիւ Քաղաքապետ .

» Այս օրուան օրս կրկնակի սիրելի է մեզ , որովհետև հաճեցար քու արզոյ ներկայութեամբդ պատուել զայն : Երջանիկ կը սեպենք ինքզինքնիս , ու մեծապէս պարծանք մեզի , որ այսպիսի գեղեցիկ զաւառաց արժանաւոր Քաղաքապետի մը ձեռքէն՝ մեր դոյզն վաստակոց վարձքը կ'ընդունինք :

» Նոյն իսկ մեր այս հասակին մէջ չենք կրնար չտեսնել , մեծապատիւ Քաղաքապետ , մեծ փոյթդ կայսերական մեծափառ չեսութեանը համար , քու ջանքը իրեն հանոյանալու , օժանդակելով ժողովրդոց բարգաւաճանացը համար ունեցած մտածութեանց գործադրութեանը , և մանաւանդ քու մեծ փոյթդ այս գեղեցիկ վենետկոյ պայծառութեանը համար , յորում մեծամեծ բարեմասնութեամբքդ ամենուն սիրտը զըրաւած ես :

» Թոյլ տուր ուրեմն մեզ , որդւոցս Արեմից , այս պատեհ առթիւս ցուցընել քեզի մեր զարմանաց և երախտագիտութեան հաւաստիքը , նաև այն փութոյն համար որով կը մեծարես այս Հայկական վարժարանը , յորում կրնանք մեր պարտքերը սորվիլ , և դպրութեանց և իմաստից մէջ յառաջադիմել , մեծափառ կայսեր ասպնջական հովանաւորութեանը տակ : Վստահ ենք որ քու մեծութիւնդ անարժան պիտի չսեպէ իմացընելու իրեն թէ ինչպէս յամենայնի կը ջանանք իր մարզասէր խնամքը օդտակար կերպով գործածելու , որպէս զի թէ մեծափառ Սուլդանին , մեր տիրոջը , կառավարութեան երախտագիտութեանը արժանի ըլլայ , և թէ ամբողջ աղզի մը սիրոյն և համարմանը :

» Ընդունէ , մեծապատիւ Քաղաքապետ , մեր սրտից անկեղծ և մեծարանօք լի զգածմանց հաւաստիքը : Ասիկայ նոր ապացոյց մըն է մեր վրայ ունեցած խնամոցդ , ու միանդամայն իրաւունք մը մեր երախտագիտութեանը » :

Լոկէ վերջը ամէն հրաւիրեալք վարժարանին մատուռը ժողվուելով , ամ-

բրոսեան գոհութեան մաղթանքը երգեցուեցաւ , և Կենաց փայտով օրհնուեցան ամէնքը , և առանձին փութաջան աշակերտաց այն ընտիր խումբը՝ որոնք դաստիարակութեան ընթացքնին լմընցընելով , խաղաղաւէտ վարժարանէ մը աշխարհիս ծովը մտնելու կը պատրաստուին , և երջանիկ օրերուն երջանիկ շարունակութիւն մը կը փափագին և կը յուսան Ինոր օգնութեամբը , որ պատրաստ է օժանդակել որոնց որ կը դիմեն առ նա : Լոկէ կայ եր նաև ամենուն մաղթանքը , և առանձինն մեր և մասնաւորապէս Տեսչաց և վարժապետաց ինդրուածքը , որպէս զի իրեն գըթութեամբը ակաղծուն արգասաւորութիւն մը տայ անոնց , որոնց այսպիսի յուսալից ներկայ մը չնորհէր եր եր :

» Այս առթովս՝ բարեսէր ազգայնոց և մտերմաց փափաքը անկատար չթողլու համար , արժան կը սեպենք ՈՒիաբանութեանս Ուաշնորդին տրուած մէկ նոր պատիւն ալ ծանուցանել , որպէս զի ալ աւելի իմացուի թէ որչափ մեծ և գեղեցիկ նպատակի համար սահմանուած են այն վարժարանքը , որոնց մէջ Լզգը իր ակնկալութիւնքը , և ծնողք իրենց միխթարութիւնը կը յանձնեն : Այսպիսի պարագայ մը թերևս աւելորդ իսկ եր յիշատակելը , թէ որ ժամանակիս հանգամանացը յարմար չտեսնեինք :

Գիտեն ազգայինք թէ վեհափառ Պարսից Շահին իշխանութեան տակ եղող համազգեաց մէջ նշանաւոր գերդատան մըն է Ուելգումեանց տոհմը , և իրեն հաւատարիմ ծառայութեանը և

1 թէ Ռափայելեան Վարժարանիս և թէ փութաջան աշակերտաց մեծապէս պատիւ լնով պարագայ մըն ալ չենք ուզեր անիշտուակ թողուլ : Պարգետաշխութենէն ետքը երբոր մեծապատիւ Վարժաքամետը աշակերտաց հանդիսադրութիւնը զննելու ելաւ , դաշտային տեսարանաց մէջ չառհաճութիւն ցուցնելով Պ . Պօղոս Շաշեանին իւղաներկ մէկ տեսարանին , մտադրութեամբ ընդունեցաւ իբրև նշանակ մը նոյն օրուան ունեցած հաճութեանը և զարմացման :

փութոյն համար արժանապէս այլևայլ պաշտամամբ և պատուոյ նշաններով փառաւորուած : Ի՞ս տոչմէն ազնիւ ՈՒրզա ՈՒելքում Խանը՝ իր դաստիարակութեան ընթացքը Փարիզու Ո՛ուրատեան Ա արժարանին մէջ ըրած ըւլով, ոչ միայն յառաջադէմ ուսումնասիրութեան առիթ եղեր էր, այլնաև հայրենիքը գառնալէն ետքն ալ խոհական խմաստութեամբը և զգուշաւոր բարքով՝ Ա արժարանիս գլխաւոր պարծանքներէն մէկը : ՈՒեզի համար անձանօթ չէր այն ազնիւ պատանւոյն Երախտագէտ սիրուը . բայց ինքը ազնուագոյն զգացմամբ ուզեց մօտելս աշխարհաչուակ ընել այնպիսի կերպով մը, որ միայն անանկ ընտիր սրտէ մը կը յուսացուէր : Իր Պարսից Դրանը առջեւնեցած մեծարանքը յօգուտ ՚ի կիր գործածելով, երբոր քանի մը ամիսյառաջ յատուկ պաշտամամբ մը վեհափառ Ը ահին կողմանէ Լոստանդնուալիս եկաւ, Պաղզիոյ գեսպանին հետ այն տերութեան գործոց վրայ խօսելու, խնդրեց ու ընդունեցաւ Ը ահէն Ի՞նիւծու և Ի՞նիւու կարգին երկրորդ պատուանշանը, մեր ՈՒիաբանութեան Ը ուաջնորդին և անոր յաջորդացը համար :

Ա հափառ Ը ահը հրամայեց որ թէ պատուանշանը և թէ հրամանագիրը անձամբ յանձննէ ազնիւ պատանին մեր Ուիստին ՚ի Պալիս եղող վարդապետաց ձեռքը : Հրամանագրոյն մէջ մասնաւոր մտադրութեան արժանի խօսքերը հարկ կը համարինք թարգմանութեամբ հրատարակելու :

« . . . Մեր կայսերական Մեծափառութեան յատուկ է՝ մասնաւոր արքունի խնամոց արժանի երեցընել զանոնք, որ բարոյական և բնական զիտութեանց լուսոյն ծագմանը համար կ'աշխատին և առաքինութեան ու զատիփարակութեան սկզբունքը տարածելով, ազգաց բարերարք կը ճանչցարին, և զիտութիւնը խնդրողաց համար կենդրոն մը : Եւ որովհետեւ նոյն սկզբունքը ունի նաև Մեր արքունի առատամատութիւնը, այսպիսի անձինքը՝ բարեկամութեամբ Մերյաւիտեանական իշխանութեան մօտեցը

նել, Մեր վեհափառ Տեսչութեան պաշտօնէից ձեռքով իմաց տրուեցաւ Մեզի թէ Վենետիկոյ Մխիթարեանց Միաբանութեան Մեծաւորը, ուր զատիփարակութեան և ուսմանց կեղրոն է, ուր արդիւնք և խոհականութիւն զիտութեանց և առաքինութեանց հետ հաւասար կը փայլին, ուրիմաստութիւնը՝ գերազանց բարեմասնութեանց հետ շաղկապեալ է, որ զիտութեանց կեղրոն է, և արուեստից և զպրութեանց աղբիկ, և ամէն կարելի ջանքը կ'ընէ իր բարձարուեստեան վարժարանացը մէջ զիտութիւնքը տարածելու և զատիփարակութեան միջոցները զիւրացընելու, զեղեցիկ պարտաւորութիւն մը վրան առած է հրահանգելու ամենայն աշխարհաց ուսանողքը, ու ճզիւ կը կատարէ իր հաւատարմութեան ու փութոյն պարտքը զոր ունի առ մեծափառ Տեսչութիւնն Օսմաննեան . . . Բաց ասկէ Միրզա ՈՒելզում Խանը, որ Մեր Տէրութեան մէջ զերազոյն աստիճան մը զրաւած է, որ իմաստութեամբ և զիտութեամբ նշանաւոր է, և Մերյաւերժական Պետութեանը մէջ առաջ եկած՝ Պաշտօնակալ Գնդապետ է, և Անձնապահապետ Արքայից Արքային մեծափառութեանը, և անոր մեծ Պետութեանը ներքին թարգման, որն որ նոյն Միաբանութեան Վարժարանացը մէջ հրահանգուած է, զանազան անդամ Արքայից Արքային իմացուց նոյն Միաբանութեան անձանցը մատուցած այլ և այլ ծառայութիւնքը՝ յօգուտ մահմէտական ազգաց հըպատակութեան տակ եղող ժողովրդոց նըրկատմամբ : Ուստի Մեր Արքունի կամքը այդ Միաբանութեան Առաջնորդը մասնաւոր պատուոյ մը արժանի զատեց, խրկելով անոր՝ Առիւծու և Արքու Կարգին երկրորդ պատուանշանը » . . .

Ի՞ս մասնաւոր պատիւը նշանակելու ատեննիս՝ չենք կրնար միանգամայն մեր շնորհակալութիւնը չյայտնել նաև ՈՒրզա ՈՒելքում Խանին, ՈՒրբանութեանս այն ազնիւ բարեկամին, որ իրեն աշակերտութեան օրելուն յիշատակը՝ այսպիսի կերպով մը անմահացնել ըստակը մէջերնիս, ու Ա արժարանին ընդհանուր տեսուչը փառաւորելու ատեն իրեն երախտագիտութեանը, քաջալաւ բարուց և առ մեզ ունեցած յատուկ սիրոյն նշանակը յայտնել բոլոր աշխարհի :